

**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018  
ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2019 թվականի հունվարի 22-ին ժամը 12: 00-ին տեղի ունեցավ Ֆերիկ համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2018 թ-ի տարեկան կատարած աշխատանքների վերաբերյալ; Ժողովին մասնակցում էին ավագանու անդամները, գյուղապետարանի աշխատակիցները, համայնքի բնակիչները և Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ Ա. Թովմասյան;

2018թ-ին ընթացքում Ֆերիկ համայնքի գյուղապետարանի կողմից կատարվել է հետևյալ աշխատանքները;

1.Ճշգրտվել է Ֆերիկ համայնքի գույքահարկի և հողի հարկի բազայում առկա թերությունները; Ձեռնարկվել են միջոցներ չգործող մեքենաների սեփականատերերին ծանուցագրեր հանձնելու և չգործող մեքենաները խոտանելու համար;

2.Վերացվել է կադաստրային գծագրման ժամանակ աշխատանքային վրիպումները և անճշտությունները:

3.2018թ-ի փետրվարի 10-ին Ֆերիկ համայնքում գյուղատնտեսության խորհրդատվական կենտրոնում մշակվել են գյուղատնտեսության զարնանային աշխատանքների նախապատրաստական աշխատանքներ:

4.01.012018թ դրությամբ համայնքի ազգաբնակչության կողմից ստացվել է 15 բողոքներ , որից բավարարվել է 10-ը; Բողոքները հիմնականում վերաբերվել են բնակչության և սոցիալ- տնտեսական վիճակին, սեփականաշնորհված հողերի անբերրիությունը, հոսանքների և խմելու ջրի հետ կապված խնդիրները:

5.Ֆերիկի ազգաբնակչությունը աջակցվել է ձեռք բերելու 50տ. ամոնյակալին պարատանույթ (սիլիտրա) 7000դ. առժողությամբ ՀՀ կառավարության աջակցությամբ;

6.Մարտ ապրիլ , մայիս ամիսների ընթացքում գյուղապետարանի և ազգաբնակչության համատեղ ուժերով կատարվել է աղբահանություն, մաքրվել է համայնքի փողոցները, մշակույթի տան տարածքը, մաքրվել է խոտից:

7. 2018թ-ի ապրիլ ամսվա ընթացքում գյուղապետարանի օժաղակությամբ և համայնքի բնակիչների օժաղակությամբ՝ դպրոցի աջակցությամբ մաքրվել է դպրոցի տարացքը;

8.Ապրիլ մայիս ամիսին ազգաբնակչությունը տրվել են ծանուցագրեր ժամանակին հարկային պարտականությունները կատարելու համար:

9.2018թ-ի մայիս հունիս ամսվա ընթացքում բարեկարգվել է 4 դաշտամիջյան չանապարհ:

10. 2018թ.-ի մայիս Ֆերիկ համայքում մահացած 2 բնակիչների ըստանիքներին հատկացվել է ֆինասական օգնություն:

11. 2018թ-ի մայիս հունիս ամսվա ընթացքում բարեկարգվել է 4 դաշտամիջյան չանապարհ

12. 2018թ.-ի մայիս համայքում մահացած 1 բնակիչների ըստանիքներին հատկացվել է ֆինասական օգնություն: մսին շրջանավարտներին տրամադրել է գումար:

13. մայիսի ամսվա ընթացքում գյուղապետարանի կողմից մաքրվել է դպրոցի տարածքը: 15. Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայություն՝ հակահամաճարակային միջոցառումներ:

14. Հունիսամսին մաքրվել է ճանապարհների եզրին կուտակված հողային շերտերը տեղափոխվել է համապատասխան աղբավայր:

15. Հուլիս ամսին ցորենի բերքահավաքի կազմակերպելու համար 1 կոմբայնավարի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն ժամանակին աշխատանքները կատարելու աշխատանքները :

16. 2018թ-ի հունիս ամսին ֆերիկի գյուղապետարանի կողմից լրացուցիչ մաքրվել են բոլոր ներտնտեսային առուների խցանված հատվածները:

17. Հուլիս ըթացքում մաքրվել է համայնքի կենտրոնական ճանապարհի երկկողմանի խոտային ծածկույթը:

18. Օգոստոս ամսին գյուղապետարանի աջակցությամբ մաքրվել է համայնքի ներտնտեսային ոռոգման ցանցը 200մ:

19. Սեպտեմբեր ամսին ֆերիկ համայնքի գյուղապետարանի խորհրդատվական կենտրոնում մշակվել են գյուղատնտեսության աշնանացանի աշխատանքների նախապատրաստական աշխատանքները:

20. Հոկտեմբեր- Նոյեմբեր ամիսներին համայնքապետարանի և բնակիչների օգնությամբ կատարվել է համայնքի 10 փողոցների կենցաղային աղբահանություն :

21. Նոյեմբեր ամսին Ֆերկ համայնքի սոցիալապես անապահով 5 ընտանիքների տրվել է ալյուր:

22. Դեկտեմբեր ամսին Ֆերիկ համայնքի սոցիալապես անապահով 2 ընտանիքների հատկացվել է գումար:

23. Դեկտեմբեր ամսին Ֆերիկ համայնքի դպրոցի երեխաներին բաժանվել են ամանօրյա նվերներ:

24. Անցկացվել է համայնքի ավագանու 7 նիստ , որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին, բնակիչների սոցիալ-տնտեսական իրավիճակին վերաբերյալ հարցեր և որոշումներ փակցվել է գյուղապետարանի շենքում ցուցավահանակում՝ համայնքի բնակիչների համար տեսանելի տեղում: